

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԵԱՅ ՀՅԵ ՊԱՏՐԻԱՐք ՄԸ Ի ԲՈՍՔԸ

Հետագայ տողերը կը կարդանք լատին-ներէն Յիշատակարանի մը մէջ, որ ատենոք կը պատկանէր Բասրայի Կարմեղեանց Դարմանատար Աստուածածին (N. Dame des remèdes) կոչուած եկեղեցւոյն, բայց այսօր կը գտնուի Հոռվմ, ուր Բաղդադէն տարուեցաւ 1924 ին վերջերը լատին Առաքելութեանց ցուցահանդէսին առթիւ:

“Anno Domini 1684 die 27 Junii professus est Catholicam fidem illustrissimus dominus Joannes episcopus, olim Patriarcha Constantinopolitanus ex ritu Armenorum.”=

Յամի Տեսոն 1684 յաւուրն քսաներորդի եօթներորդի Յունիսի, դաւանեցաւ զկաթողիկէ Հաւատոս մեծապայծառ Տէր Յովհաննէս Եպիսկոպոս որ երբեմն էր Հայածէս պատրիարք Կոստանդնուպոլսոյ:

դարձեալ ուրիշ տեղ.

“Anno Domini 1684 die 12 Julii obiit dominus Joannes episcopus Armenus, olim Patriarcha Constantinopolitanus, qui in suo morbo Catholicam fidem professus est, et bis confessus et communicatus est, ac tandem extrema unctione munitus dormivit in Domino die supradicta, ac sepultus est in Cemetrio dicto haish ben mariam.”.

Յամի Տեսոն 1684 յաւուրն երկոտասաներորդի ամսեանն Յուլիսի վախճանեցաւ Տէր Յովհաննէս Հայ Եպիսկոպոսն՝ որ էր երբեմն ժամանակի պատրիարք Կոստանդնուպոլսոյ, որ մինչ հիւանդն էր դաւանեցաւ զկաթողիկէ Հաւատոս եւ երկիցո խոստովանեցաւ եւ Հաղորդեցաւ: Հուսկ ննջեաց ի Տէր ի նմին աւուր որ յիշեցաւ վերագոյն եւ թաղեցաւ ի դերեղմանատեղւոյն որ կոչի Խսա-Բէն-Մէրեսմ:

¹ Յեշաւ գերեզմանոցը — որուն հողին տակ բազմաթիւ Հայեր թաղուած կան — Բասրայի Կամոցիկէ Քրիստոնէից կը պատկանէր եւ կողքէն դուրս անվազապատ եւ սակաւաթիւ արմաւենիներ պարունակող գետին մըն էր, եւ կանուանու էր բայց կամ համառօտակի բայց այս:

Այսինքն՝ Յիշուս որդի Մարիամուն, անուանակուութիւն մը, որ յառաջ եկած էր միեւնոյն անունը կը ող այն Մահմեդական ուխտաւեղիւն, որ անոր մօտերը կը գտնուէր եւ որուն ծանօթ առաջին յիշատակութեան կը հանդիպէր 1604 ին վերջերը Pedro Ceixeira Սպանիացի ուղեւորին ուղեւութեան մէջ (էջ 78):

1869 էն ի վեր լքուեցաւ նոյն գերեզմանոցը, որուն Հո-

Կոստանդնուպոլսոյ Հայոց պատրիարքական աթոռը Յովհաննէս անունով միայն չորս աթոռակալ պատրիարքներ ունեցած է ամբողջ Ժկ. դարուն տեւողութեան: Անոնք էին Յովհաննէս Խուլ Կոստանդնուպոլսէցի, Յովհաննէս Մուղնէցի, Յովհաննէս Թիւթիւննի, եւ Յովհաննէս Ամասիացի Թոփալ:

Արդ՝ ասոնց առաջինը 1600 էն սկսեալ չորս անգամ պատրիարքական պաշտօն վարելէ ետքը կը վախճանէր 1636 ին: Երկրորդին մահուան թուականը անյայտ է, բայց հաւանական չէ որ ան ապրած ըլլայ մինչեւ 1684, քանի որ 1652—1655 արդէն պատրիարք էր: Իսկ երրորդը երկու անգամ պատրիարք ընտրուելէ յետոյ կը վախճանէր 1667 ին, ուրեմն մեծապէս հաւանական մանաւանդ թէ դրեթէ ստոյդ է որ Բասրա վախճանող վերոյիշեալ Հայազգի պատրիարքը՝ Յովհաննէս Ամասիացին էր, որ պատրիարք էր 1674—1675, եւ որուն մահուան տեղն ու թուականը անծանօթ էին ցարդ:

ՆԵՐՍԻ Վ. ՍԱՅԻՆԾԱՆ



ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

ՃՈՐՈԽԻ ԱԽՈԶՈՒՆԸ

առ = առուակ: — լ = լեռ: — լը = լեռնաշղթայ:

(Շարումակութիւն:)

Դ.

Սպերի Հովիտը:

Ճորոխը Բալախոսոն ընդունելուց յետոյ, կրկնակի մեծանում է, լայնում է եւ հուժկու սահանքով մտնում է Սպերի երկար Հովիտը: Սպերի գաւառը գտնուում է արեւմուտքից՝ Բայրուրդի, Հարաւից՝ Հովտիկի եւ Թորդումի, արեւելքից՝ Կիսկիմի, իսկ Հիւսիսից Պոնտական Խաղաթիքի մէջ. Սպերի ամբողջական հիւսիսային երկարութեամբ տարածում է Պալմա լեռնաշղթայի շար-

ղերուն արդէն Սրաք բնիկները սկսած էին հետզհետէ տիրանալ եւ զանոնք այլէ այլ պէտքերու համար գործածել: Իսկ Հայերը ինչպէս որ հիմա ունին իրենց յատուկ գերեզմանատունը, զին ատեններն ալ իրենց մեռելները կը թաղէն առանձին տեղ մը, որ, ինչպէս կ'երեւի, մտ էր մի և Քրիստոնէից վերայիշեալ գերեզմանոցին:

քը. իսկ հարաւից՝ իշեք-Սրթի, Օրթա-
Գեօլ Խորիտկ, Տանձոտ, Աղաչ-Քիլիսէ,
Խախամին եւ Մեղրբեր լշները: Սպերի հո-
վիտը երկու կողմից պատաժ է խիտ անտառ-
ներով, ընտիր փայտով. իսկ գետի ափերը
այդեստաններով, պարտէզներով եւ բանջա-
րանոցներով: Լեռներն ունին լճակներ, բիւ-
րաւոր աղբերակներ եւ առուներ, բազմաթիւ
առուակներով, որոնք ոռոգում են երկիրը:
Ինչպէս բուսականութեամբ, նոյնպէս կեն-
դանիներով, որոնք վիստում են անտառնե-
րում, եւ հանքերով հարուստ է այս հովի-
տը. նրա անունն ու հոչակը շատ հին է:
Սպերի հիւսիսային լեռներից զէպի հարաւ
են իջնում եւ ձորոխին ձախ կողմից խան-
ւում են, Պարիսարեան՝ Սարփ-Կայս լեռնե-
րից կին, խոպիստա եւ Տանձոտ առ-ըը,
որոնք ոռոգում են համանուն գեղերը, իրենց
մացրաններով, ախոռներով եւ բարձունքնե-
րում ունեցած եալլաններով (ամառանոց):
Պալրդ եւ Այլը (Յովլտակ) լճակներից գուրս
է գալիս (Որձոր թէ) Օրծոր առ-ը, ոռոգում
է Օրծոր գեղը: Այս առ-ի երկու կողմերը
նկատելի են նախնական ժամանակներից
մնացած ջրանցքի հետքեր եւ Յովլտակ լճակի
ափերում վիշապազանց շրջանից մնացած
գլանաձեւ ժայռէ որձաքարի արձաններ:
Քառասնից (Քրքլար¹) լեռներից իջնում են
Խորձոր, Կենդիս, Սունելլյա, Գորգոր, Մըր-
գանց, Թայախտ, Անգնիք, Փազիք², Կադ-

միր, Եագիրկի, Վաղան, Կոջուխտոր,
Ալեկանց, Երբանց, Քէյանց, Խարդումաս¹,
Դիշանց, Կարա-Գեավուր, Փասկոր, Սէմէ-
գրէկ, Գիշենուտ, Մեծանց², Կան, Զափանց³
լեռներից իջնում են Զափանց Վանի, Եա-
խիձէ, Կելիսաղ առուտկները, որոնք բոլորն
էլ ոռոգում են համանուն գեղերը, որանց
մացրաները, եայլաները, ախոռները եւ
վանքերը:

Սպերի հովիտն սկսում է Նիդէյ առուակի խառնութքից, եւ վերջանում է Հնուտ կըրկնակի վտակներով, որոնցից մին աջից եւ միւսը ձախից խառնում են ձորոխին: Այս ամբողջ երկարութիւնը ձգւած է արեւմուտքից արեւելահիւսիս, մօտաւորապէս քառասուն կիլոմետր երկարութեամբ, որի ճիշտ միջին մասումն է Սպեր աւանը, որ այսօր 350 տուն ժողովուրդ ունի: Մի ժամանակ Սպերում ապրում էին 4—5000 անոր, նոյն իսկ Օսման. աշխարհագրութեան ժամանակ 1530 իրրահիմ փաշայի ցուցակներում — Գասարայում (Վարչութեան կենդրոն) 4500 ծուխ է արձանագրւած: Աւանի գիրքը, բերդերն ու այլեսատանները ցոյց են տալիս, որ նա բազմամարդ է եղել, որի միայն աւերակներն են մնացել: Միջնաբերդի, ապարանքի, տաճարների եւ ամրոցների աւերակները, մեծ մասամբ որանց թումբերը ցոյց են տալիս, որ նա եղել է հովտի թագուհին: Նրա բարձր աշտարակներից երեւում է շատ հեռւից ձորոխի օճապոյտ շարժումներով առաջ սողալը: Ինչպէս նախապատմական շենուածները, նոյնպէս աչքագարեան պա-

Ներ նշանակութիւն ունին, իսկ Խարդումասը յիշեցնում է Եփրատի ափերում, Միդանայի մօտ Կոմմագէնի Խարդումալը¹

1 Խապիր աւասոց Յ-Կ Վլատիկ կ գեղագուարձ մի անկիւ-
նրա արեւմասեան կողմբ Ճորոխի գեղագուարձ մի անկիւ-
նում, բարձունքների վրայ կանգնած է մի գեղ, որին թըքա-
խօսները Մազման են անուանում. խակ Հայերը Մեծանձ:
Սրա գիրը, աւերախները ու այցեստաններն ցցց են տա-
լիս, որ մի ժամանակ Ապերի տէր նախարարները ապրել
են այս Ռատանում եւ այնտեղից իշխել են ոչ միայն ամ-
բողջ Հովտին — Սպերին, այլ եւ Բաբերդին — Միաս-
աւանին ու Բալախոսին:

2 Stu tq 335, Sn. 2

3 Զափանց լեռները, որ տեղի է ջնշում է Զափանց
առ-ը իր բազմաթիւ առուներով, բզիսում է Զափանց լճակ-
ներից։ Այս լճակները Քառասոնից լժակներից 10—12 կիլո-
մետր հեռաւ որութիւն ունին եւ շարունակութիւնն են կազ-
մում մարեւ մուտքից արեւելք։ Զափանց լեռնանցքը Սպերի-
եւ Ծիգելի Ճանապարհի (Կարավան) ճիշտ մեջ տեղն է եւ
ժամանակին լիզելի հետ մեծ յարաբերութիւնն է ունեցել։
Սպերի բնակչութեան ծով իշնելու — պանդխոտութեան
Ճանապարհն է, միանդամայն չոր միքր, գինի եւ այլ բներեր
այստեղից եին կ. Պոլս եւ ու թիւ քաղաքներ փոխադրում։

րիսպները ցոյց են տալիս քաղաքակրթութեան աստիճանական զարգացումը այս հովառում եւ այսօրուան թշուառ-աւելակ կացութիւնը:

Այս աերակները եւ Սպեր անունը յիշեցնում են Ակկատ-Սումմերների Շիպարը արդիւմագործական քաղաքը, ինչպէս երեւում է նրանց հետ միաժամանակ ապրել է եւ դործել է իր երկրամշակութեամբ, անասնապահութեամբ եւ հանքաղութեամբ: Սպերի հանքերի մշակութիւնը եւ այդ բովերի հալոցներից գուրս թափուած, վերըստին քարացած նիւթերը ցոյց են տալիս արևոտների զարգացման աստիճանները: Սպեր ո՞չ միայն ծանօթ էր Հելլէն եւ Հոռոմ պատմիչներին, ինչպէս ցոյց են տալիս ասորաբարելագետների պեղումներից գուրս բերած նիւթերը. Սպերը յայտնի է եղել նոյն իսկ Քաղղէացիների շրջանում: Բացի Սպերի մեծանձ աւերակները, հովտի հիւսիսային եւ հարաւային բաղմաթիւ բովերի ընդարձակ խորշերը, հալոցներից գուրս թափուած մոխրակոյաերը, քառասուն կիլոմետր երկարութեան վերայ քառասունից շատ ամրոցների եւ բերդերի, հարիւրաւոր գղեակների եւ գեղերի հետքերը ցոյց են տալիս, թէ որքա՞ն չէն, ճոխ եւ առաջաղիմած է եղել երկիրը: Այսօր աւեր Սպերի ձորը հարիւր երեսունի չափ գեղեր ունի, 1536ին Սպերում եղել են չորս-հինգ (4—5) անգամ աւելի, իսկ Պարթե-Արշակունիների իշխանութեան ժամանակ՝ տասն անգամ աւելի: Թէ եւ այսօր Հայերից իսպառ անջատուած է Սպերի գուրառը, բայց իւրաքանչիւր թրքացած հայ ծերուկ անցորդին կարող է ցոյց տալ իր գեղի-հանդերի, ձորերի, ապառաժների մէջ եղած հին գիւղերի, վանքերի, հայլաների, դղեակների տեղերն ու անունները, որոց (այս անունների) միայն ժողովածուն կարող է ահագին անցքերի պատմութեան աղբիւր ծառայել:

Սպերից (աւան) արեւելք ձորոխ գետին միանում են ձախից հիւսիսից հարաւակած. եւ Ս. Դարբէնի¹, Ճինքար², Տոկուր,

¹ Դարբէնը երկու գեղ է, վերին եւ ստորին, որոնք գտնուում են Սոգորին լը-ի ստորոտում, ուր գտնուում են երկաթի բովեր, գետը է Ենթադրել, որ այդ բովերից գուրս բերուած երկաթը նախական ձեւով այդ տեղ շեկացրել եւ գրծագրել են: Նկատելի է նոյնպէս, որ հանքերի շուրջը կուսական խիստ անտառները խիստ նօրացած են եւ չարաւար շահագործուած:

² Ճինքար - Ճանքար, Ճինքար եւս կոչում է այս

Սոգոռունի, Ալբրիկ, Կորան, Տափառ, Լագուբար¹, եւ Հնուտ² առ-ըլը, որոնք բղիսում են Սոգոռնի լեռներից, ոռոգում են համանուն գեղերը, սրանց մացրաները, ախոռները, եայլաները, վանքերն, ամրոցներն ու այրերը:

Սպերի հովտում ձորոխը աջ ափից, հարաւայց-հիւսիսի թափուող եւ Էջք-Սրթի լ-ըլց բղիսող առուներն են, Նիգէյ, Թալստ, Բերքչի, Միշանտիս, Կորման, Մեծէգրէք³, Մէշէգրէք⁴, Խոզաղիւր, Պաղակիուտ, Ակրունար- (ակ-աղբիւր), Կենդրիս, Օրդուկի, Միշանտիս, Թալստ, Թալսրմացրա, Կորմանց, Կիպանես, Ալնոս, Գոբիս, Կարագիչ, Զինդերեկը Դինէգրէք⁵, Բաղիրգէս:

Գիշը, որին թրքացածները “Ճենիվսոն քար են կոչում եւ Ճենիվներից լինուած են համրում: Հայաստանի այլեւայլ գաւառներում շտահ հին լինութիւններին, նոյն իսկ ու անի նահանգում, համարում են Ջենիվիզների շնչի: Պէտք է նկատել, որ այս բառը Խորենացցոց եւ Ժամանակական էր եւ հմտակացների գարերում էլ գործածական էր եւ հմտակացներին Ճենիք, Ճենիվզ էին կանչում: Երեւում է, Ճանիքից (Սեւ-Ծովի) ափերից հմուտ եւ ճարպիկ արշեստաւորներ շատ են մատել Ճորժիս Ա: աղանը, որնց յիշատակը հաստատել է ժողովրդի մոքի բառարանում: Թէեւ Ճանիք, Ճենիվզ իտալական Շենովացներին էլ են անուանում - Գենովյան վաճառականները մեծ հոչակունէն Սեւ - Ծովի ափերում: Բայց Կրանք ԺԲ. - Ժ. Պ. Դարու մենակ գոնոս եւ Խորիմ: Իսկ այս բառը նրանցից էլ շուտեւ արհեստում էր իրենին Ճորժիս առաջարեցինց: Ժաւալի է, որ Ճնար չեղել դրանք ուկղելու:

Հաղոլաքար գեղի աւերակների սրբատաշ քարերը, կաւելչն-ինցեղչն ամանների մանրունքը կարմր, սեւ նարնջագոյն, գորշ-մոխրագոյն, նոյն իսկ սպիտակ ցոյց են տալիս, որ այդ գեղը շատ հին է, մեծ զարգացումն է ունեցել արհեստում: Ճորժիս առաջարեցինց առաջարար գրաւած անունները:

2 Հուտի գեղը իր անունն ստացել է շրջակայ ձորերի եւ վեճերի մէջ տարածուած չունի (կըզւէք): Անչպէս անտառից, Ու միայն Հուտուարը Հունուարը, այլ Գիտարը, Գիմնուարը, Նուշնուարը, Վաղանուցը, Տանձուարը, Թամառուարը, Ընկուզէքը, Կաղմանուտ (Կապամախիտ) եւն, որոնք բուրդն էլ շրջակայ անտառներից են ստացել իրենց անունները: Կան նոյնպէս բանջարեցինցից գրուած անուններ:

Բանջարու (Պանջուրետի), Սիստորոս եւն:

3 Մեծէգրէքը, միւս արեւմուեան Մեծէգրէքից զանազնելու համար նրան կանչում են Մեծէգրէք: Ինչպէս դրեւ եմ, այս Մեծէքի (արիոջ-համարարի, ստունիկի, կամ նոյն իսկ սրանց տիկնանց) ակտարակները յատկապէս իրենց աշհագործած հողերն էին, որոնցից շատ կան ամբողջ Ճարտի Ա: աղանում: Վ. յա Մեծէգրէքիները մշակում էին գեղերներով եւ յիշեցնում են Հուտի:

4 Դինէ-Ճինքէկ եւ Դինքան - կամ Դինքանց անունները (Դինքանց), նոյնպէս Դինքանց, մտածել են տալիս, թէ արդեք հուտմէլ այս կապուանները - գեղերը նուիրուած չեն Անահիտին: Այսօր էլ միւսնոյն տաճարներն եւ Մայր աստուածածին եկեղեցիները յիշեցնում են Մեծմօրը:

իունդուս, Կըլբչի, Շէշմանր, Բախսի,
Մեծկղբէկ¹, Եշկենց, Սըրք, Թաշնորգեղ,
Կաշինցֆ, Վարձենիս, Թէշատքեր, Քարձոր,
Մելիքի նորկանց² Քիլիսէկափու (Ժամդրան)
Վանք, Խորտիկ, Զուրբկից, Քարանձ, Կայձոր
Շիկունենց, Վարքուր, Կոլքատ, Դիցանձ³,
Շահրիստանց⁴, Քամփոր, Տանձուր եւ Կրանց,
որոնք ոռոգում են Համանուն գեղերը իրենց
ախոռներով, մացրաներով, եալլաներով,
աւերակ ամրոցներով, վանքերով եւ այրե-
րով, մինչեւ գաւառի կենդրոնը՝ Սպեր ա-
ւանը: Նոյնպէս եւ Կենադոր, Կիչկոսով,
Կազենց⁵ եւ Մոխրուշէն առ-ըր:

Էշէք-Սրթի լեռները արեւմտքից դէպի
արեւելք չարունակուելով՝ միանում են Օր-
քա-Գիօլ, Խորք-իկ եւ ապա Աղաջ-Քիլիսա⁶
լշ-ներին։ Վերջին լ-րը միացած են Կազան-
Բաշի լեռներին հարաւային ծայրով, իսկ
արեւելա — հիւսիսային կողմից Խախամին
լ-րին։ Այս լեռներից իջնող առուներն են.
Կոռուց (կրկին վ. եւ Ս.), Հնուտ, Խափ,
Զեօչք, Ծագոց, Սեմէգսէկ, Մումանց, Սե-
մէրջիկ, Փիսիրիկ, Խենէչ, Կունտ կամ
Կունդ-Ոթանի եւ Բախչա, որոնք Կիսկիմի
սահմանի վրայ են, իջնում են Աղաջ-Քիլի-
սէից եւ խառնուռմ Ճորոխին, ոռոգելով
համատուն գեղերը, մացրաները, ախոռ-
ները, եայլաներն, վանքերն ու աւերակները։

Տ Տես նախորդ երեսի 3րդ ծանօթութիւնը:

۲. ՄԵԼՔԻՆ-ՆՈՐԿԱՆՈց ԳԵՂԱ ՔԱՐՁԵԱԼ ՀԻԼԵՑՆՈւՄ Ե
ՍԵՄԻՏԱԿԱՆ ՄԱԼԿԱ-ՄԵԼՔԻՆԵՐԻՆ, ԵՐԵՎԱՆ Է ԻՆՀ ՈՐ ԱՊՈ-
ՐԱԿԱՆ մի յիշտատակ, բայց վաստեր չկան. մինչեւ պեղում-
ներ չկատարուին, չի կարելի որեւէ բան գրել:

Տ Տես նոյնալէօ նախորդ երեսի 4րդ ծա

4 Ծահրմտանց Պարթեական շրջանից է. ամրոցն
ու գղեալը այդ դարի գործ է. Ընդարձակ է, բայց այնպիսու
փլուած եւ կործանուած, որ ամեն ինչ չ լին է հաւա-
սարած:

6 Կաղ, կազենց գեղը ցոյց է տալիս դարձեալ Կազան, Կազան-Բաշի, Կազանիքչը անունների արմառը սոնիք սահպատ մեն ենթագրելու, որ այս բառի մէջ թագուած է Կայծ բառը, ինչպէս Կազ-բէկը՝ կայծեր արտավիճող, Կաւ-Կամը կայծեր սփոռող են:

և Աղաջ - Քիլիսէ լեռները պարզ թարգմանութիւն
Եկեղեց կամ Եկեղեցների անտառու ։ “Աղաջը լաբը շա-
անդամ անտառի մորով են բանացնում նյոյնպէս թուու-
քերը։ Կովկասի, Կարսի Թարգրեամայ ազդարնակութիւնը
շինուարաբակն փայտին կամ հասա եւ երկար զերաններին
“ազաջն է ասում։ Այս լեռների անտառներու մեծամեծ
գերաններ ունին եւ ազաջ բառը նրան է վերաբերում
ինչպէս յայտնի է թուուքերը աւանների, գեղերի, լեռների
անունները կամ յարմարեցնում էին - թուրբական բա-
ռերով փոփօխում, եւ կամ թարգմանում էին։ Եկեղեց
կամ Եկեղեցական անտառը Քիլիսէ - յունական - և քէ-
սիա բառով են թարգմանել եւ հաստատուել է ժողովով
մոլում այդ բառը, բայց կարելի է նեթարբեկը, որ Աղաջ-Քի-
լիսէն ուղղակի Սկելիկայթ-անտառին թարգմանութիւնն է

Այս բոլոր գեղեցում կան բազմաթիւ ամբողջների, դղեակների՝ բերգերի տաճարների աւերակներու, որոնք կենդանի վկայ են

1 Յայտնի է, որ Բագրատունիները աւք էին ինչ-
պէս Բաբերդոն-Ամբատաւանին, այդպէս էլ Նրանց էր
պատկանում Սպերը: Բայց թէ Բաբերդոնի, Բալախոսի
եւ թէ Հովհանիկ ու Սպերի ամբողջ հողերը բացարձակա-
պէս չէր կարող նրանց պատկանել: այլ այս գաւառնե-
րում կային ուրիշ սեփականատեր-կալուածատէրեր, որոնք
ունեին իրենց Ռատանն ու գեղերը այլեւ այլ կողմբում:
Եթէ նոյն իսկ որեւէ կերպով տիրացած էլ մնեն, ժա-
ռանցները բաժնուելի՞ այլեւայլ մասեր ստանում են ա-
ռանձնացնում մ էին կալուածները: Սպերի հօվիտ մէջ
գտնուած պլի: այլ ամրոցներն, ադրաբաներն, «Մեծանց
ադրաբաները ինքն ըստ իրեան պատմում են, որ հովիտ
բաժնուած է եղել մի երկու տասնեակ «մեծերի, կամ նա-
խարաբների մէջ: Թէեւ այս լեռնականների մէջ լեզուի փո-
փոխունքով ը: գարձել է լ. կամ յ. ս. - շ եւ այսպէս
շարունակաբար պէս - պէս կրծատու էլ բայց եթէ Ալեգանցը
Արեգանց կարգանք, Քայանցը՝ Քարանց, Գալիոնցը՝ Գար-
գարց, Լըքսանցը՝ Աբեղեանց կամ Արրահամեանց, Կամ
Հնցքը՝ Կայուշեանց, Մազանցը՝ Մազակեանց կամ
Մազնունի, նոյն իսկ Մանաւազեանց, Կորմանցը՝ Կոր-
մեց, Ըկիունենցը՝ Սլիունի, Ըէհրիստանցը՝ Ծովադ-
տէր, Հաւնոցը՝ Հաւնունիք, եւ շարունակաբար. այն ժա-
մանակ կը հասնիք այն եղբակացութեան, որ ամէն մի
ձորի, ամէն մի առուակի որեւէ անկիւնում շնուրած ամ-
րոցը՝ պարիսպը մինչեւ օրս էլ կրում է կալուածատէր
իշխանի անունը, Բալախոսի, Բաբերդոնի եւ Սպերի մէջ
գարիսաբեան ըս-ի Զիարէթ լեռներից իջնում է Արունի
(Էրբենի) առուակը, որը նախ անցնում է Զիֆթլիկեց
(ադրաբակից) Խան (Եալութ), Տորոնտանց գեղերից, Միա-
նում է Բալախոս Փոսկին, ոռոգելով դաշտում կարչի
վ. եւն, Կիֆ եւ Վագանդա, կամ Բագդանա գեղերը եւ
ապա խառնում է Ճորիթին: Հըքինիս անունը, որ մինչեւ
օրս մացել է Հայերի, նոյն իսկ թուրքացածների բերա-
նում, հին տաճարի աւերակներ ունի, նախապատմական
շընակից մացած: Եյտեղ կան նոյնպէս եւ աչքադարեան
ամրոց՝ պարիսպներ, աւերակների թուրքեր եւ Զ նշա-
նով քարեր տաշուած, որոնք ստիպում են անցորդին
զննել: Քննել եւ մտմտալ: Զիֆթլիկը մանաւանդ Տօրոն-
տանոց գեղը, Զիարէթի ու խասատղի լեռներն իրենց ան-
տառներով եւ ողբէրակներով, մանաւանդ Խանը (Եա-
լութի զօհարանով), ցոյց են տալիս, որ վազ ժամանակ-
ներում այդ լեռը, Պահանը եւ արքունիքը, որոշ սրբա-
վոցը, որեւէ Պատէզլ-Բգեալիսի (կրօնապետ) եւ Հրամա-
նատարի (ապարապետի) բնակավայր է եղել, որին հպատա-
կու եւ են շընակայ զի վերի բնիները: Էքքինս գետը միա-
նալով Բալախոսին ոռոգում է Կարչի, Կիֆ եւ Վագանդա
գեղերը: Եյտ բոլորի մէջ ու չը են գրաւում Բագդանա-Վա-
գանդա գեղերը, որն յիշեցնում է են Ուղթիքի Բագդանին:

Սյս Բագդանա-Բագդատ գեղերի անունները արդեօք Բագրատունիների Նախնական անունները չեն, որոնք տէր Էլին ինչպէս Բագրեգոնին եւ Սպերին, ապագյում մեծ Կալւածներ ձեռք բերին նյոնպէս Աւ զմիկ-Օլթիում, Բագ, Բագինք, Բագարան, Բագիրեայլյա, Բագառանիճ, Բագհառուճ եւ Բագամ արդեօք Բագրատունիների ծագման եւ զարգացման Նախնական կետը չեն, որ իջև են իրենց Էլրէնիսից, Բագինէն Հաստատուել դաշտում եւ ասրածուել են զեզի Հարաւ՝ Բագերգոն, արեւմուռք՝ Բալախոս, եւ արեւելք՝ Սպեր: Բագ՝ զնշարանի սեղանը չեն, այս անունները մնչեւ այս օր այնպէս են ամրացած-Քարացած բնակչութեան գանկում, որ առանեսեակ գարերոց չի մոռանում: Բագը ոչ միայն Բալախոսի եւ Օլթիի մեջն

Հովտի անցեալ փառքի եւ ճոխութեան։
Ինչպէս փառաւոր յիշատակներով զար-
դաբուած է քրիստոնէական Ե.-ՓՊ. ԴՊ. դարը
Ալյարատում, նոյն ճարտարագետութիւնը
նկատելի է Ճորոխի աւագնում։

Սյս յիշատակարաններից ամենանշանաւորները գտնվում են նոյնպէս Սպերի արեւելան գաւառում՝ Կիսկիմում։ Սպերն ու Բաբելոննը գուցէ անվնաս մեզ հասնէին, կամ շատ նուազ վնասուած լինէին, եթէ 1578ին Լալա Մուստաֆա Փաշայի աւերածին չմասնուէին։ Լալա Փաշայի ենիշերական գունդը մտաւ եւ ամբողջ Երեք ամիս հրետանու ուռմբերով եւ ականներով կործանեց

է, այլ դա անցել է Արաբսի ափերը, Անկի գլուխին - Ալ-
չա արքի լանջին Բագդադը, Արաբածի գաղաթին՝ Բագդա-
դա, Արաբսի, Ախուրեանի ափերին՝ Բագրան, Բագայա-
պինձ եւն: Մի՞՛մէ Սաւալան լերան այրերում եւ տաճար-
ներում ապրող արեւ - մոխազպալս Քուրմ - մոկերի նա-
խորդների բագինները չեն հիմնուած նաւի թաշխարհի մշտա-
բորբոք գաղերի եւ բոցերի (Սուրբախաննի) բարձունք բա-
գինները: որոնք 40-50 դար անջնջել են մասցել Բագդակի
վրայից:

Պէտք է ենթագրել, որ ինչպէս մշտաբորոք կրակի
արտայացտուած կէտերում, նոյնպէս կենսական ջերի
ըղիսած ակերում հիմուած են Բագինները - Զոհարանի սե-
ղանները, պաշտօն մատուցանելու Մէհր աստծուն, արեւ ին
և Մէծամօր - Անահային, անբիժ ջրերի արտադրողներ: Այս-
պէս զոհարաններն եւ կոչուել են Բագ-բատներ (զոհ-
անողներ), որոնք ճոխանալով կազմեցին Բագրատունների
տահմը, Բարերդոն - Սպերում: Այս մոդերը, որոնք սկսել
եին իրենց գործունեութիւնը աղբերակների Բագիններում
զոհարարութեամբ. Վիշապազանց գարում նրանք ու միայն
վճիռ աղքիւրների եւ Մէծամօր պաշտօնեաներ եին, այլ
եւ իրենց սահմանների ջրապետներն ու ջրաբաշխներն եին:
Ակկատ - Սու մերների երկիր ջրանցքների զարդացման դա-
րում, երբ երկրամշակութիւնը զարդացաւ ջրանցքների
ընորհիւ, ջրանանցքների ջնարարութիւնը հասարակական
ամենասանհրաժեշտ գործն էր եւ երկրամշակի իդէալն էր
ջրանցք ունենալի իր ցանքսերի մօտ եւ Վիշապազանց քուր-
մերը, ամբողջ հասարակութիւնների գլուխն անցած բա-
րեկարգում էին ջրերի - առուների հօսանքը, ջրպետ քուր-
մերը այնպիսի լայնարձակ հասայթներով էին հարստա-
նում, որ ձեռք բերին Սպերի հանքերը եւ սկսեցին մշա-
կել պղինձ եւ որիշ մետաղները: Այս հասայթներով մո-
գերը հետոզետե բդեալիններ են գառնում եւ հարստու-
թիւնը - կարողութիւնը նրանց միջոց է ատլան արքաներ
դառնալու: Սպերի եւ Կիսկիրի բովերի ըստը գտնուած
հալոցները անշամփ մոխրակյատ են թօղել, հալոցներից
գործ թափուած նիւթերը նորից քարացել են եւ այն-
պիսի քիմիական բաղադրութիւնները ունին, որ պէտք է
ենթագրել, որ պղնձից սրանք եւ պատրաստել են Լազուր
ներկը եւ արտահանել:

Բագրատունիների հարստութիւնը առապելեական
Համբաւ ունի, Արանք ոչ միայն գանձակին զնել են բազ-
մաթիւ կալւածներ ոչ միայն Թորդում, Ուղուիք, Կիս-
կիմ, այլ եւ Ամբարատում, Աղճիկում եւ Տարուբերա-
նում։ Կրանք ոչ միայն կարաւաններ են ունեցել, արեւ-
ելքից արեւմուտք վաճառք են տարել ու բերել, այլ եւ
մղերանցներ են ունեցել մեծամեծ քաղաքներում եւ
միջնորդներ են եղել մեծամեծ փոխանակութիւնների։

Ճորոխի Աւազանի բերդերը, գղեակները
ամբոցներն ու տաճարները:

թէեւ Ֆաթիհ Մէհմէտ Բ. 1463ին Տրապիզոնին եւ 1473ին ալիրել էր Բարձր-Հայքին, բայց չէր կարողացել նուածել. նրա լիազօրներն ո'չ կարողանում էին հարկ հաւաքել, ո'չ էլ երկրի խաղաղութիւնը պահպանել. Ասսի (ապստամբ) բէզէրը յաճախ խուժում էին շրջակայ գաւառները կալուածատէրերը ո'չ միայն չէին վճարում խոստացուած եւ որոշուած հարկերը, այլ եւ կողոպտում: Լալան եկել էր կործանելու այն բոլոր բերդերը, ամբոցները եւ որջերը, որոնք Ասսիների ապաստարաններն էին: Լալան ոչ միայն կործանեց դարեւոր շինութիւնները, արուեստի արտադրութիւնները, այլ նաև կոտորեց հայ — քրիստոնեաներին: աղատուեցին միայն Խոլամբ դաւանողները, այն էլ 20%₀ ժողովրդի:

Բաբերգը, Սպերը, Կիսկիմը, Օլթին
կործանելուց յետոյ, անցաւ Կուրի հովտով
Արգահան, Ախալցխա, Գորի, Թիֆլիս և
Սիօնի ու Անչխիսխթի տաճարների գլխին
մահիկ-աստղ կանդնեցնելով, գնաց Գան-
ձակ, Շաքի, Շիրվան ու Բագի:

Որքան էլ կործանուած ու փշուած են
իսպիրի բերգերն ու ամրոցները, դղեակներն
ու տաճարները, բայց նրանց աւերակները
գեռ քառասուն դար յետոյ էլ խուզարկուին
պատմելու են իրենց անցեալը, որը միայն
չինարարութեամբ է սահել մինչեւ Օսմա-
նեանների իշխանութեան տակ ընկճուելն ու
կործանուելը: (Յովհան Շարեցի և Հնուափ
Յայսմաւուրք): Թէեւ Լալա Փաշան կոր-
ծանման հետ կոտորեց Սպերի Հայութինը,
բայց անտառների եւ այրերի մէջ ապաստա-
նած Հայերից շատերը վերադարձան եւ վե-
րացինեցին իրենց գեղերը: Հարիւր տարի
առաջ իսլամ ընդունած սեպուհները, Բէյ
դարձած իրենց հասոյթն ապահովելու հա-
մար, այդ ճորտերին հովանաւորեցին եւ
վերաշնեցին-չէնացըին աւերակները: Նոյն
իսկ 1700ին մօտերը Սպերում 150 հայ գե-
ղեր կային եւ այնպէս էին աճում, որ եթէ
1723ին Արիֆ-Ահմէդ Փաշան նորից կոտորել
չոտր, այժմ 200—300 գեղ կը լինէր, բայց
1723ին Հայ գեղերի թիւը հասաւ 24-ի եւ
այդ թիւը չմեծացաւ մինչեւ սոյն քսանե-
րորդ զարը եւ վերջին կոտորածները: 1723ին
Արիֆ-Ահմէդ Փաշան բռնի իսլամացըրեց

Համշէնի մի մասը, որոնք մինչեւ այսօր հայերէն են խօսում:

1915ին կոտորեցին և հեռացրին գաւառուց էզիձոր, Գեղանոր, Դշանոր, Դիցանց, Խաչաղբիւր, Մաղկոց, Կողունց, Զկնաշուր, Մաշկենց, Մանց, Մացրիկ, Յիշեն, Հողունց, Հնուտ, Նուխուշէն, Նորքաղաք, Նուշնուտ, Շարիստանց, Զիպուտ, Զուրընկեց, Վարիզնոց գեղերը, Սպեր գասապա, Քրեօզ եւ Օձուտ :

Հեղափոխական:
(Տարբութակելիք:)

USPQBS



Ա Ա Տ Ե Կ Ա Խ Օ Ս Ա Կ Ա Ն

LEHMANN-HAUPT C. F., Armenien einst und jetzt. Reisen und Forschungen. II. Band, I. Hälfte. Das türkische Ost-Armenien. In Nord-Assyrien. Mit 132 Abbildungen und 2 Tafeln. Berlin, B. Behrs Verlag Friedrich Feddersen, 1926, 8°, S. XII + 450 + 21.

1

իԵ. գլխ. 225—245. Դ. գրքով Հեղինակը կու տայ Հիւսիսային Ասորեստանի նկարագրութիւնն ու իրենց կատարած պատմական եւ տեղագրական հետազօտութիւնները: Այս արշաւանքին գլխաւոր նպատակն էր ուսումնասիրել ուրարտեան եւ ասորեստանեան յարաբերութիւնները: Բաղէջէն կը մեկնին դէպի Զէզիրէ եւ ապա Նինուէ, ուր կից (ԻԶ. գլ.) ճամբայ կ'ելլեն եւ անձրեւի պատճառաւ կ'իջեւանին Եարըմջա, ուր կը զտնեն Տուկուլտի-Նինիր Ա.ի, Բաբելոնի տիրողներէն առաջին ասորեստանեան թաղաւորին արձանագրութիւնը: Ասկից կը յառաջանան դէպի Կալախ-Նիմրուլ, Քսենոփոնի «Լարիսա»ն: Հեղինակին համաձայն Քսենոփոնի յիշած լարիսա եւ Մեսպիլա աւերակ քաղաքները կը համապատասխանեն Կալախի եւ Նինուէի, որոնք իրենց գիրքն առեալ արամացիներէն larêšâ = վերին եւ ուշրիլա = ստորին կը կոչուէին: Գիշեր մը կ'անցնեն մերձաւոր արարներու քով եւ երկրորդ օրը Հեղինակն իր խուզարկութիւնն յառաջ կը տանի Կալախ-Նիմրուլի աւերակներուն մէջ, ուր կը զտնէ պատմական Շա-

միքամի գործունէութեան ապահով եւ ստոյդ
նշաններէն մըն՝ Ներոյ կամ Նաբու աստու-
ծոյն արձանը սեպազրութեամբ մը, որուն
իմաստն է. «Եերոյ հզօր եւ վեհափառ աս-
տուծոյն, Եսագլիլի որդւոյն, որ Կալախի
Եղիղա տաճարին մէջ կը բնակի, այս ար-
ձանս շինոծ եւ կանգնած է, եւ կը նուիրէ
Աղագնիբարի Ասորեստանի թագաւորին
կեանքին եւ Շամմուրամատի, Պալատի Տիկ-
նոջ, իւր Տիկուչոյն կեանքին համար Բել-
տարսի-Իլումա Կալախի եւն. Երկիրներու
կուսակալլ ։ ։ ։ : (Տես նաեւ Մատիկեան՝
Արայ գեղեցիկ. ՀԱ. 1922, 558:)

Այս Սեպագիր արձանագրութիւնս առիթ
կ'ըլլայ բազմահմուտ Հեղինակին վերստին
անդրադասնալ Շամիրամի խնդրոյն լուծման
մասին՝ (Հմմտ. Klio I [1901], 256, Անդ
XV [1917], 243), թէ Շամիրամ պատմական
անձ մըն է եւ արձանագրութեանց «Նամմու-
րամատ»ին հետ նոյն, որ խնամակալ եղած
է իւր որդւոյն եւ 5 տարի ասուրական տէ-
րութիւնը վարած (810—805) եւ ճակատներ
մզած հիւսիսային աղգերուն դէմ Մարաց
եւ Ուրարտացիներու։ Ինքն է, որ միանդա-
մայն Ներոյի արձանը Բարելոնէն փոխա-
դրած է Կալախ եւ այսու միացուցած իմաս-
տութեամբ Նինուէ եւ Բարելոն։ Ներոյի
բարելական աստուծոյ մը փոխադրութիւնը
Շամմուրատի կողմանէ հաւանական կ'ընէ
Շամմուրամատ ծագմամբ բարելացի համա-
րի։

Հեղինակին համաձայն Շամիրամի զլոյցը իւր ծնունդն առած է Մարտց և Պարսից քով եւ ապա անցած ասոնցմէ Ասորեստան և Բարելոն : Զարմանալի կը թուի Հեղինակին Հայոց մէջ Շամիրամի զրոյցին գեռ կենաւանի մնալը, և Վան քաղաքին անոր վերապուտիլ : Այս բանս մեկնել ջանալով, կ'ըսէ, թէեւ մէկ կողմանէ մատենազրական ազգեցութեանց վերագրելու ենք, սակայն այսու խնդիրը գոհացուցիչ կերպով չի լուծուիր, այս պատճառաւ միւս կողմանէ պէտք ենք ենթադրել, թէ արդէն իսկ Պարսից առաջին գերիշխանութեան ժամանակ այս զրոյցը ասոնցմէ Հայոց անցած եւ արմատ ձգած է :

Այս Ենթաղբութիւնն որչափ ալ հաւա-
նական կը թուի, սակայն դժուարաւ կարելի
է հաշտեցնել այն իրողութեան հետ, որ Շա-
միրամի զբոյցը եւ անոր ազդեցութիւնը, կը
դիմէ Մատոկիեան, «Քնչպէս մեզի տրամա-
դրելի ժողովրդական ազրիւներէն ալ կը
տեսնուի, տեղական եղած է աւելի եւ իրքեւ